911 Արտակարգ թերթ

N 25 (673)
30-06-6.07 2017

ISSN 1829-149X

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENSY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Վստահություն

Նոր շրջափուլի մեկնարկը

ԱԺ-ում 2017-2022 թթ. կառավարության գործունեության ծրագրի հաստատումից հետո գործադիրի առաջին նիստը գլխավորել է նախագահ Սերժ Սարգսյանը: *«Ծրագրի հաստատմամբ կարող ենք ազդարարել գործադիր իշխանության նոր շրջափուլի մեկնարկը: Կառավարությունը, վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ, վայելում է իմ և մեր քաղաքական թիմի լիակատար վստահությունը, և պատրաստ ենք աշխատելու բոլոր կառուցողական ուժերի հետ»,-* ասել է նախագահը և վստահեցրել, որ շարունակելու են կուռ ու միասնական թիմով հետևողականորեն իրականացնել կառավարության արդեն նախանշված ծրագրերը:

Նախանշված ծրագրեր

ԱՐԵՎԻ ՈՒԺՈՎ

Արևային համակարգային կայանի կառուցման համար ներդրողներ ներգրավելու նպատակով հայտարարված միջազգային մրցույթին մասնակցելու նախաորակավորման հայտ է ներկայացրել 20 ընկերություն և կոնսորցիում: Նախապատվությունը կտրվի նրան, որը կներկայացնի ցածր և մրցունակ սակագին: Ակնկալվում է, որ արդեն 2018-ի վերջին Գեղարքունիքի մարզի Մասրիկ գյուղի մոտ շահագործման կհանձնվի 55 մգՎտ հզորությամբ առաջին արևային կայանը: Կառավարությունը մտադիր է ևս հինգ տեղանքներում կառուցել մինչ 110 մգՎտ հզորությամբ կայաններ: Կառավարության հավանությանն է արժանացել նաև «Բամբակ» ծրագիրը, որով նախատեսվում է Արմավիրի մարզում բամբակի մշակություն սկսել: Ըստ ներդրողների՝ բացվելու է 15 հազար աշխատատեղ, հնարավոր կլինի զարկ տալ թեթև արդյունաբերությանը, սկսել մսի ու կաթի արտադրություն: 2000 հա հատկացված է բամբակի մշակության, 200 հա՝ վերամշակման գործարանի կառուցման համար: Ծրագրի մեկնարկին Չինաստանից, Տաջիկստանից ու Ղազախստանից մոտ 150 մասնագետ է ներգրավվելու բամբակի մշակության գործում: ■

Հայաստան

ՏԻԵԶԵՐԱՅԻՆ ՋՐԻ ՍԵՐՄ

Շոգ է, արևը չորացնում է ամեն ինչ, լեռ ու սար դարձնում շեկ անապատ, կյանքը՝ վայրի ծիրանի դառնահամ կորիզ: Ու ամեն քայլափոխի ջուր ես փնտրում, զովանալու ու նորից կյանքով լցվելու համար:

Երբ Ալ. Թամանյանը նախագծում էր Երևանը, Արարատյան փոքրիկ քաղաքը խմելու ջուր չուներ: Հին էրիվանի փողոցներում կժերով ջուր ծախող տղաներից էր առնում ջուրը, որը բերում էին հեռուներից: Եվ... նախագծում երևացին կապույտ՝ ջուր խորհրդանշող կետեր: Երևանը վերաշինող Թամանյանը պետք է վաներ շոգը քաղաքից, որ ուղտի նման ամեն ամառ չոքում էր ամեն բակում և շիկացնում ամեն ինչ:

1953-ին Երևանի գլխավոր հրապարակում հայտնվեց մեծաշատրվան ջրավազանը՝ 7 ցայտաղբյուրներով: Երևանյան ամառը զովացնող, երգող ջրավազանն իրեն է ձգում բոլոր բոլորին:

Արտակարգ շոգ է Երևանում, ասպատակում է քաղաքը արաբական անապատների տաք հոսանքը: Եվ իսկական փրկություն են ցայտաղբյուրները, որոնք, ի դեպ, մոտ 600-ն են: Երբ մեր երկրում նոր էր ձևավորվում արտակարգ իրավիճակների վարչությունը, առաջարկ եղավ ընդլայնել, պահել ու պահպանել արտակարգ իրավիճակային նշանակության մեր ցայտաղբյուրները: Մե՞ր սառնորակ ցայտաղբյուրները, որ խենթացնում են զբոսաշրջիկներին:

Կեչառիսում շոգին ցայտաղբյուրի մոտ նստած սիրառատ դեմքով մի տիկին ջանադրաբար բացատրում էր իրեն ուղեկցողներին, որ «պուլպուլակ», «ցայտաղբյուր» բառերը չեն թարգմանվում ոչ մի լեզվով, ու պնդում էր, որ պուլպուլակը զուտ հայերեն բառ է: Անցորդներն էլ լսում ու հավանություն էին տալիս կնոջ զով խոսքին:

Բակում ցայտաղբյուրի հայտնվելն անպայմանորեն կապված է նշանավոր իրադարձության հետ: Սովորաբար այն կառուցում են, երբ մարդը մահանում է, կամ լույս աշխարհ է գալիս նոր մարդ: Կյանքն ու մահն է խորհրդանշում, նորն ու հինը, սկիզբն ու ավարտը: Եվ ցայտաղբյուրից ջուր ըմպելիս խոնարհվում ենք, ակամա հարգանքի տուրք մատուցում զով ջրին և այն ի նպատակ պուլ-պուլ ջրակից բխեցնողին:

Մենք ջրածին ենք, մեր էպոսի հերոսների նման, դրա համար էլ մեր երակներում զով արյուն է հոսում: Սաստիկ շոգ է, բայց կարծես չենք շոգում: Ու դեռ շոգ կապույտում երկրպագում ենք Արևին, ջուր պարգևող վիշապ քարերին:

Իտալացիները զովանում են շատրվաններում, ամերիկացիները... սուպերմարկետներում: Մեզ ոչ միայն զովացնում է մեր ցայտաղբյուրը, այլև մի փոքր ավելին... մեր ջուրը խինդ ու ծիծաղ է բերում, հայրենյաց կարոտ ու բխում է միշտ խորհրդավոր յոթ աղբյուրներից:

Մեր երկիրը, մեր քաղաքը զով է դառնում ոչ միայն սառն աղբյուրներից, այլև կանաչապատ տարածքներից: Գեղեցիկ սովորույթ է դառնում՝ պուրակներն ու զբոսայգիներն ու ավտոճանապարհներն ու առանձնատները զարդարվում են գունագեղ եղևիներով, տուաներով: Ու դրանով ավելի է զովանում շոգ ամառը. բարձրաբերձ եղևնին հյուսիսային սառնաշունչ տրամադրություն է ներշնչում, երկնասլաց տուաա՝ մերձարևադարձային ծովային քամի ու խոնավություն:

Լողափնյա սեզոնը բացվեց, Սևանը հյուրընկալ է դարձել. ափերին քարե սրտիկներ՝ որքա՜ն ուզես: Թե գտնեք, նետեք ծովը, որպես տիեզերային ջրի սերմ: Կնույնանաք էպոսի մեր հերոսներին...

Ու կվանեք շոգը ձեր մարմնից, ձեր քաղաքից...

Շոգեր սպասվում են նաև հուլիսին: ■

Գագիկ ԵՂՅԱՆ

Կարևոր

ՄԱՅԻՍԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ

էջ 3

ԿԱՊԱՆԻՑ ԵՐԵՎԱՆ՝ 40 ՐՈՊԵՈՒՄ

էջ 4

ՄԱՍԻՍԻ ՀՓՑ-Ի ՓՈԽՀՐԱՄԱՆԱՏԸ

էջ 5

ԱՆԽՏՐԱԿԱՆ

էջ 6

911 Արտակարգ թերթ
N 25 (673)
30 հունիսի-6 հուլիսի, 2017

ՀՀ-Ռուսաստան. համատեղ պլան

Նախարար Դավիթ Տոնոյանն ընդունել է Հայաստանում 102-րդ ռուսական ռազմաբազայի հրամանատար, գնդապետ Վլադիմիր Ելկանովին և ՀՀ ԶՈՒ և ՌԴ ԶՈՒ զորքերի միացյալ խմբավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանին: Կողմերը նախնական պայմանավորվածություն են ձեռք բերել «Արտակարգ իրավիճակների կանխարգելման և չեզոքացման» համատեղ պլանի կազմման վերաբերյալ:

ԻՆ ԱՍԵՆ
2

ՎԱՍՆ ՏԱՎՈՒՇԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ու Կարմիր խաչի միջազգային կոմիտեն համաձայնագիր են ստորագրել Տավուշի մարզում քաղաքացիական պաշտպանության փրկարարական ծառայության կարողությունների զարգացման ոլորտում 2017-2018 թվականների համագործակցության վերաբերյալ: Համաձայնագիրը ստորագրել են ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը, Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ղեկավար Կարոլին Դույեզը, Հայկական Կարմիր խաչի ընկերության նախագահ Մխիթար Մնացականյանը: Ծրագրի նպատակն է բարձրացնել սահմանամերձ համայնքների բնակչության պաշտպանությունն ու պատրաստվածությունը: Նախատեսվում է Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում գործող ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության հենակետերում, համայնքների մանկապարտեզներում և դպրոցներում կազմակերպել առաջին բուժօգնության, աղետների ժամանակ վարքականոնների, միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ դասընթացներ: *«Սահմանամերձ համայնքներում բնակչության պաշտպանությունն ու պատրաստվածությունը յուրահատկություններ ունեցող ոլորտ է, և շատ կարևոր է, որպեսզի բնակիչները պատրաստված լինեն տարատեսակ արտակարգ իրավիճակներին արձագանքելուն: Սա իրական աջակցություն է համայնքներին, վերջիններիս դիմակայունության բարձրացման հարցում»,*- համաձայնագիրը ստորագրելիս ասել է ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը:

ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ 2017-2021 ՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարությունը հունիսի 29-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության համակարգի 2017-2021 թվականների» և «Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման 2017-2021 թվականների» միջոցառումների ծրագրերը, որոնք մշակել է արտակարգ իրավիճակների նախարարությունը: Առաջին ծրագրով սահմանված է 14, երկրորդով՝ 7 կետ: Մասնավորաբար. «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում, քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքների և կազմակերպությունների ցանկի նախագծի մշակում՝ ըստ վտանգավորության աստիճանի, պահեստային կառավարման կետերի ուսումնասիրություններ և վիճակից բխող առաջարկությունների մշակում, Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի ուսումնասիրություն՝ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ստեղծման նպատակով, քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվան՝ մարտի մեկին նվիրված միջոցառումների (դասախոսություններ, սեմինարներ, վարժանքներ) անցկացում ուսումնական հաստատություններում, «Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման ռազմավարության» նախագծի մշակում, «Արտաշատ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման պիլոտային ծրագրի» նախագծի մշակում, Հայաստանի բնակչության տարբեր խմբերի և կառավարման մարմինների նախապատրաստման համար ուժեղ երկրաշարժի վերաբերյալ բազմակողմանի ուսուցողական ծրագրերի մշակում, Հայաստանի պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագրի մշակում և այլն:

ԱԻՆ-ում վստահ են, որ այս ծրագրերի իրականացման արդյունքում կարգավորվելու են տարածքային պաշտպանության կազմակերպման, իրականացման և տարածքային պաշտպանության այլ պետական մարմինների ուժերի ու միջոցների հարաբերությունները, հստակեցվելու են քաղաքացիական պաշտպանության բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների գործառույթները քաղաքացիական պաշտպանության բնագավառում, զգալիորեն բարձրանալու է հանրապետության սեյսմիկ պաշտպանվածության մակարդակը: ■

ՀՐՇԵՁ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հրդեհների խմբեր, դասեր, տեսակներ

Հրդեհների բաշխումը խմբերով և տեսակներով, նրանց նմանության ու տարբերության հատկանիշներով կոչվում է դասակարգում:

Դասակարգումը արհեստական է, եթե այն հրդեհները միավորում է արտաքին (պատահական) հատկանիշներով, և բնական է, եթե հրդեհների խմբավորումը հիմնված է դրանց ներքին օբյեկտիվ կապերի և զարգացման ընդհանուր նշանների վրա: Հրդեհների բնական դասակարգումը համարվում է գիտական, այն թույլ է տալիս կանխորոշել տարբեր տեսակի հրդեհների մարման մարտավարության օրինաչափություններ:

Հրդեհները կարող են դասակարգվել ըստ տարբեր հատկանիշների:

Դասակարգմանը ներկայացվող հիմնական պահանջն է. հրդեհների խմբերը, դասերը, տեսակներն ու տարատեսակները պետք է կանխորոշեն այրման դադարեցման միջոցները, հնարքներն ու կիրառվող կրակմարող նյութերը, ստորաբաժանումների գործողությունների ուղղությունը և հաջորդականությունը, ուժերի և միջոցների բաշխումը և այլն:

Հրդեհների դասակարգման նշանները լինում են ընդհանուր և մասնավոր:

Ընդհանուր նշաններ. հատուկ են բոլոր հրդեհներին. այրվող նյութերի ֆիզիկա-քիմիական հատկություններ, կրակի տարածման արագություն, հրդեհների տևողություն, հրդեհների վայր և այլն:



Մասնավոր նշաններ. հատուկ չեն. հրդեհի մակերեսի ձև, վառվող նյութերի մակերես և այլն:

Հրդեհները բաժանվում են երկու խմբի՝ բաց և փակ տարածքներում:

Ըստ դասերի

A դասի հրդեհներ. այրվող պինդ նյութեր: Եթե այրվում են մխացող նյութեր՝ փայտ, թուղթ, տեքստիլ իրեր և այլն, ապա՝ A1 ենթադաս, իսկ նյութերը, որոնք չեն ծխում, օրինակ, պլաստմասե իրեր՝ A2 ենթադաս:

B դասի հրդեհներ. դյուրավառ և այրվող հեղուկներ: Եթե այրվում է ջրում չլուծվող հեղուկ (բենզին, դիզվառելիք, նավթ և այլն)՝ B1 ենթադաս, ջրում լուծվող հեղուկներ (օրինակ՝ սպիրտներ)՝ B2 ենթադաս:

C դասի հրդեհներ. գազեր (պրոպան և այլն):

D դասի հրդեհներ. վառվող մետաղներ: Եթե այրվում է թեթև մետաղ (ալյումին, մագնեզիում, դրանց համաձուլվածքներ և այլն)՝ D1 ենթադաս, այլ մետաղներ (նատրիում, կալիում)՝ D2 ենթադաս, մետաղաօրգանական միացությունների հրդեհներ՝ D3 ենթադաս:

E դասի հրդեհներ. Լարման տակ աշխատող էլեկտրական սարքավորումներ:

F դասի հրդեհներ. ռադիոակտիվ նյութեր և թափոններ: ■

Ավագ ՍԻՄՈՆՅԱՆ
Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս

911 Արտակարգ թերթ
N 25 (673)
30 հունիսի-6 հուլիսի, 2017

Ուսումնավարժություն՝ մետրոպոլիտենում

Հունիսի 30-ին, ժամը 22:00-ին, Երևանի մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանում կանցկացվի ուսումնավարժանք «Հրդեհաշիջում և փրկարարական աշխատանքներ» թեմայով: Փրկարարներից բացի կմասնակցեն նաև մետրոյի աշխատակիցները, շտապօգնության, «Վեոլիաջուր», «Երևանգազ» և «Էլ.ցանց» ընկերություններից մեկական վթարային խմբեր:

ԱՌԱՋ 3

ՄԱՅԻՍԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ամփոփել է այս տարվա մայիս ամսվա ընթացքում հանրապետությունում գրանցված արտակարգ դեպքերի ու պատահարների վիճակագրությունը:

Փրկարար ծառայության ստորաբաժանումները մայիս ամսին իրականացրել են 1441 ելք՝ 67-ով պակաս, քան 2016-ի մայիսին: 430 ելքով փրկարարներն արձագանքել են արտակարգ դեպքերի, 680՝ կենցաղային կանչ, 79՝ կեղծ ահազանգ, 252՝ այլ դեպք: Ամենաշատ դեպքեր գրանցվել են մայրաքաղաքում՝ 540, ամենաքիչը՝ Տավուշում՝ 18 դեպք: Արտակարգ դեպքերից զոհվել է 19 մարդ (այդ թվում՝ 3 կին, 1 երեխա), տուժել՝ 858 մարդ (այդ թվում՝ 248 կին և 132 երեխա): Փրկարարները փրկել են 19 մարդու (2016-ի մայիսին՝ 13 մարդու), բոլորը՝ ճանապարհատրանսպորտային պատահարներից:

Արտակարգ դեպքերի մեծ մասը՝ 508, տեխնածին են: Եղել են նաև 33 տարերային, 428 սոցիալ-կենսաբանական դեպքեր:

Հրդեհներ

Գրանցվել է հրդեհների առաջացման վերաբերյալ 298 ահազանգ (2016-ի մայիսին՝ 257 ահազանգ), հրդեհ է գրանցվել 184 դեպքում (2016 թվականի մայիսին՝ 168 դեպք): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հրդեհների քանակն աճել է 16-ով կամ 9,5 տոկոսով: 53 դեպքում գրանցվել է կեղծ ահազանգ: Հրդեհներից զոհվել է մեկ, տուժել՝ 5 մարդ (2016-ի մայիսին՝ 2 զոհ, 3 տուժած): Նյութական վնասի չափը՝ 44,9 մլն դրամ՝ 7 մլնով ավելի, քան 2016-ի մայիսին: Երևանում հրդեհները պատճառել են 14,1 մլն դրամի վնաս: Մարզերից ամենաշատը տուժել է Կոտայքը՝ 18,55 մլն, ամենաքիչը՝ Գեղարքունիքը, Արագածոտնը, Վայոց ձորը՝ մոտ 100-հազարանոց դրամ: Սյունիքում և Տավուշում՝ 100 հազարից էլ քիչ: Ամենաշատ հրդեհներ գրանցվել են բնակելի շինություններում՝ 53 դեպք: Բացի սրանից, կրակի բաժին են դարձել տրանսպորտային միջոցներ՝ 25 դեպք, կրպակ-տնակ-ավտոտնակ՝ 12, բուսածածկ տարածք՝ 12, աղբ՝ 47 դեպք և այլն:

184 հրդեհից 144-ը գրանցվել է քաղաքներում, 40 հրդեհը՝ գյուղերում: Թե գյուղերի, թե քաղաքների հրդեհների քանակն աճել է: Երևանում գրանցվել է 106 հրդեհ: Մարզերի քաղաքներից ամենաշատ հրդեհներ գրանցվել են Լոռիում՝ 10 դեպք, ամենաքիչը՝ Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի քաղաքներում՝ 2-ական: Գեղարքունիքի և Տավուշի քաղաքներում հրդեհ չի եղել: Գյուղերի հրդեհների մեծ մասը գրանցվել է Կոտայքում՝ 10 դեպք, ամենաքիչը՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի գյուղերում՝ 1-ական:

Ճանապարհատրանսպորտային պատահար՝ ՃՏՊ

Գրանցվել է 292 ՃՏՊ, որից 133-ը՝ մայրաքաղաքում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ գրանցված ՃՏՊ-ների թվաքանակն աճել է հինգով: Այս պատահարներից զոհվել է 15, տուժել՝ 420 մարդ: 2016-ի մայիսի համեմատությամբ տուժածների թվաքանակն աճել է 36-ով, զոհվածներինը՝ նվազել 13-ով: ՃՏՊ-ների մեծ մասը՝ 136, բախումներն են: 84 դեպք՝ վրաերթ, 34 դեպք՝ տրանսպորտային միջոցների շրջում, 38 դեպք՝ այլ բնույթի ՃՏՊ: Ամենաշատ ՃՏՊ գրանցվել է Երևանում՝ 133, ամենաքիչը՝ Լոռի, Վայոց ձոր՝ 8-ական:

Փլուզումներ

Գրանցվել է 15 փլուզում՝ 3-ով պակաս, քան 2016-ի մայիսին: Փլվել են բնակելի շենքեր, շինություններ, արդյունաբերական, սպասարկման օբյեկտներ, ինժեներական կառույցներ և այլն: Փլուզումների պատճառներն են՝ ՃՏՊ, քարաթափում, պայթյուն, գետի վարարում: Փլուզման 10 դեպքի պատճառները պարզված չեն: Ամենաշատ փլուզում գրանցվել է Երևանում՝ 7: Վայոց ձորում՝ 3, Արագածոտն, Արմավիր, Արարատ, Գեղարքունիք, Լոռի՝ մեկական, Կոտայք, Տավուշ, Շիրակ, Սյունիք՝ 0:

Թունավորումներ

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 404 թունավորում, զոհվել է 2, տուժել՝ 428 մարդ: 2016-ի մայիսի համեմատությամբ աճել է թե դեպքերի, թե զոհերի, թե տուժածների քանակը: Ամենաշատ դեպքեր գրանցվել են մայրաքաղաքում՝ 269: Մարզերից ամենաշատը՝ Արմավիրում՝ 39, ամենաքիչը Սյունիքում՝ 2 և Վայոց ձորում՝ 1 դեպք: Թունավորումների պատճառներն են. ալկոհոլ՝ 121, դեղորայք՝ 89, քիմիական նյութեր՝ 75, սննդամթերք՝ 22, շմոլ գազ՝ 14, սողունների և միջատների խայթոցներ՝ 78 և այլն:

Այլ դեպքեր

2017-ի մայիսին գրանցվել է 4 պայթյուն, մայրուղային խողովակաշարի 8 վթար, 2 հեղեղում, 1 սելավ, 3 քարաթափում, 2 սողանք, 3 ուժեղ քամի, 7 կարկուտ, վայրի կենդանիների 4 հարձակում և այլն:

Հրապարակման պատրաստեց
Արամ ՁԱՔԱՐՅԱՆԸ

ԱՄԱՌԱՅԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ

Հրդեհների դեմ պայքարը սոսկ հրշեջների գործը չէ

Հանրապետությունում ջերմաստիճանի կտրուկ բարձրացման պատճառով մեծացել է անտառներում և խոտածածկ տարածքներում հրդեհների առաջացման և տարածման վտանգը:

Ներկայումս աշխարհում տարեկան ավելի քան 200 հազար անտառային հրդեհ է արձանագրվում: Այս թիվը տարեցտարի մեծանում է: Հետևաբար, աճում է նաև այդ հրդեհների պատճառած ուղղակի և անուղղակի վնասի չափը:

Անտառային հրդեհների դեմ պայքարի արդիականությունը չի նվազում: Սրանց հետևանքով վերանում են անտառային ռեսուրսներ՝ ֆլորան, ֆաունան, վնասվում է հողաշերտը, աղտոտվում մթնոլորտը, շարքից դուրս են գալիս անտառամերձ բնակավայրերի կապի ու էլեկտրահաղորդման գծերը, փայտաշեն կամուրջներ, գյուղատնտեսական ցանքատարածություններ և այլն:

Անտառային հրդեհների հիմնական պատճառը մարդն է: Շատ կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել հրդեհային պրոֆիլակտիկային, բնակչության շրջանում իրականացվող բացատրական աշխատանքներին:

Հրդեհավտանգ ժամանակահատվածներում անտառային հրդեհների կանխարգելման համար արգելվում է՝

1.Վառել խարույկներ: Խիստ անհրաժեշտության դեպքում դա կարելի է անել բաց տարածքներում՝ շրջապատելով խարույկը, 5 մետրից ոչ պակաս միներալիզացված շերտով, իսկ վերջում հանգցնել ջրով կամ ծածկել հողով:

2. Նետել այրվող լուցկի, չմարված ծխախոտի մնացորդ:

3. Որսի համար օգտագործել դյուրավառ և մարմրող նյութերից փամփուշտի խիցեր:

4. Ավտոմեքենաները լիցքավորել վառելիքով՝ առանց շարժիչն անջատելու:

5. Շահագործել անսարք սնուցման համակարգով մեքենաներ:

6. Ծխել և օգտվել բաց կրակից՝ վառելիքով լիցքավորված մեքենաների շրջակայքում:

7. Կատարել չոր խոտի, խոզանի այրում (բացի վերահսկելի այրումներից, որոնք իրականացվում են սահմանված կարգով, որոշակի ժամանակահատվածներում՝ տեղական իշխանությունների թույլտվությամբ):

8. Արևով լուսավորվող բացատներում թողնել շշեր, ապակու կտորներ, քանի որ դրանք կարող են ֆոկուսացնել ճառագայթներն ու աշխատել որպես հրկիզող լինզաներ:

9. Թողնել (թափել) քսայուղով, բենզինով, կերոսինով և այլ դյուրավառ հեղուկներով ներծծված լաթեր (բացի հատուկ հատկացված տեղերից) և այլն:

Անտառային հրդեհի փոքր օջախի հայտնաբերման դեպքում պետք է փորձել հանգցնել այն: Կարելի է օգտագործել սաղարթավոր ծառերի տեսակների կամ մատղաշ ծառերի ճյուղերի կապուկ, թաց հագուստ, ամուր կտոր: Կրակի եզրաշերտին կողքից՝ հրդեհի օջախի կողմը սահող հարվածներ հասցնել, ասես ավլելով, սրբելով կրակը: Ճյուղերը, կտորը յուրաքանչյուր հարվածից հետո շրջել, որպեսզի դրանք այդ ձևով սառչեն ու չայրվեն: Ոչ մեծ կրակը կարելի է տրորել ոտքերով, չթողնելով, որ այն տարածվի դեպի ծառերի բներն ու սաղարթները: Նախ հաստատ համոզվել, որ կրակը մարել է ու էլ չի բորբոքվի, նոր միայն հեռանալ: Անտառային հրդեհի գոտում հայտնվելիս անհրաժեշտ է որոշել քամու ու կրակի տարածման ուղիները, շարժվել կրակի տարածմանը զուգահեռ, դեպի անվտանգ տեղ (գետ, առվակ, այլ ջրամբար): Եթե հնարավոր չէ դուրս գալ հրդեհի գոտուց, պետք է փորձել մտնել մոտակա ջրամբարը, ծածկվել թաց հագուստով, բերանն ու քիթը փակել թաց դիմակով: Դուրս գալով անվտանգ տեղ՝ հրդեհի տեղի ու ժամանակի, հնարավոր պատճառների մասին հայտնել անտառտնտեսությանը կամ հրշեջ պահպանությանը: Առավել հրդեհավտանգ ժամանակահատվածներում խորհուրդ է տրվում ճանապարհներին (անտառի մուտքի մոտ) ստեղծել հսկիչ կետեր՝ վարորդներին ու բնակիչներին հրդեհային անվտանգության կանոնների պահպանման մասին նախազգուշացնելու նպատակով: Որքան էլ ցավալի է, դեռևս քիչ չեն մարդիկ, որոնք իրենց անփութությամբ վնաս են պատճառում անտառին: Ֆիզիկապես անհնար է անտառն ամբողջությամբ և մշտապես պահել ուշադրության կենտրոնում: Ոչ մի վերահսկողություն և տեխնիկա ցանկալի արդյունք չի տա, եթե հենց իրենք՝ քաղաքացիները, ընդհանրապես չվերաբերվեն մեր ընդհանուր հարստության պահպանման գործին:

Հրդեհների դեմ պայքարը սոսկ հրշեջների գործը չէ: Բոլորիս պարտքն է աչքի լույսի պես պահպանել մեր կանաչ բարեկամին՝ անտառը, նրան զերծ պահել ամենավտանգավոր թշնամուց՝ կրակից: Չէ՞ որ անտառը համաժողովրդական սեփականություն է, ամենքիս հարստությունը: ■

ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանն ընդունել է ՀՀ-ում Չինաստանի դեսպան Թիան Էրլունի և այդ երկրի սեյսմիկ վարչակազմի փոխտնօրեն Զաո Հեպինի գլխավորած պատվիրակությանը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նախկինում ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակում կազմել սեյսմիկ ոլորտում համագործակցության ընդհանուր ծրագիր, որը ներառելու է երկրաշարժերի կանխատեսման և սեյսմիկ մոնիթորինգի կազմակերպման ոլորտներում չինական փորձի ուսումնասիրություն, Սեյսմիկ պաշտպանության ծառայության ազգային դիտացանցի արդիականացում և տեխնիկական օժանդակություն, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատման փորձի փոխանակում, մասնագետների վերապատրաստում: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել կիրառելու Չինաստանի փորձն արբանյակների օգնությամբ գեոդեզիական ուսումնասիրություններ իրականացնելու համար:

Հյուրերն այցելել են Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն: Չին սեյսմիկ մասնագետներին ուղեկցել են Սպիտակի տարածաշրջանի Գեղասար գյուղ, որտեղ մինչև այժմ պահպանվում են 1988-ի երկրաշարժից առաջացած մեծ խորությամբ ճեղքերը:

Պատվիրակությունն այցելել է նաև Գառնիի երկրաֆիզիկական դիտարան՝ ծանոթանալու տեխնիկական հնարավորություններին և գործունեությանը: ■

911 Արտակարգ թերթ
N 25 (673)
30 հունիսի-6 հուլիսի, 2017

ՏՈՆ

Հունիսի 26-ին «էրեբունի» օդանավակայանում նշվեց ՀՀ ՁՈՒ ավիացիայի կազմավորման 25-ամյակը: Ցուցադրվեցին զինված ուժերի ավիացիոն տեխնիկայի հնարավորությունները: 1992-ի հունվարից նորաստեղծ ՀՀ պաշտպանության նախարարության կազմում ստեղծվել է Ավիացիայի և ՀՕՊ զորքերի համատեղ վարչությունը: Նույն թվին ավիացիայի վարչությունն առանձնացվել է ՀՕՊ վարչությունից:

Ավիացիա 4

ԿԱՊԱՆԻՑ ԵՐԵՎԱՆ՝ 40 ՐՈՊԵՈՒՄ

Մեկնարկել են Կապանի օդանավակայանի վերագործարկման աշխատանքները

Սյունիքի մարզկենտրոնի բնակիչներն այսօրվա պես հիշում են, թե ինչպես էին ժամանակին օգտվում Կապանի օդանավակայանից, Երևան հասնում մոտ 1 ժամում: Բայց արդեն 27 տարի է, 320 կմ հեռավորության վրա գտնվող կապանից Երևան հասնելու համար օգտվում են տրանսպորտային այլ միջոցներից և բարդ ու հոգնեցուցիչ ճանապարհը հաղթահարում 5-6 ժամում: *«Առաջ «Յակ-40» ինքնաթիռը մի ժամում Երևան էր հասցնում, հիմա մարդ է վատանում՝ դե արի ու ժամերով տեղ հասցրու, երբ հինգ րոպեն էլ կյանքի համար կարևոր է»,-* ասաց Կապանի բնակիչ՝ 60-ամյա Արշամը, որը համոզված է՝ օդանավակայանի վերստին գործարկումը ոչ միայն նման իրավիճակներում փրկություն կլինի բնակիչների համար, այլև մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նոր տեմպ կհաղորդի: Կապանի օդանավակայանը գործել է մինչև 1990-ականների սկիզբը, սակայն արցախյան պատերազմի տարիներին՝ օդանավակայանի ուղղությամբ արձակված կրակոցների հետևանքով՝ անվտանգության նկատառումներով դադարեցվել է դրա շահագործումը: Տեղացիները հիշում են, որ կրակոցներից նույնիսկ վիրավորվել էր ուղևորներից մեկը:

Այսօր արդեն Կապանի օդանավակայանի վերագործարկման հարցը կրկին օրակարգում է: Դեռևս 2014-ին Ստեփանավանի և Կապանի օդանավակայանների վերագործարկումն ընդգրկված էր կառավարության իրագործելիք ծրագրերի ցանկում: Վերջերս փոքր քաղավիացիայի կարևորությանն է անդրադարձել նաև ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը. *«Պետք է ըստ ուղղությունների ուսումնասիրել առևտրային փոխադրումները, հասարակական տրանսպորտի վիճակը, տվյալ ուղղության ներուժը, սակագնային քաղաքականության հնարավորությունները: Համոզված եմ, որ վաղ թե ուշ փոքր ավիացիան դառնալու է անհրաժեշտություն, և աշխարհագրությունը բավականին մեծ է լինելու: Պետք է պատրաստ լինենք դրան և ունենանք զարգացման տեսլական»,-* քաղավիացիայի գլխավոր վարչություն կատարած այցի ժամանակ ընդգծել էր վարչապետը: Նրա հանձնարարությամբ արդեն օդանավակայանի վերագործարկման ուղղությամբ գործուն աշխատանքներ են տարվում: Օդանավակայանի վիճակը գնահատելու, այն գործարկելի դարձնելու համար 27 տարի անց՝ 2017-ի հունիսի 8-ին, Կապանի օդանավակայան փորձնական վայրէջք է կատարել Piper M500 փոքրիկ օդանավը: Վայրէջքին հետևել են Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, քաղավիացիայի վարչության ներկայացուցիչները, ուժային կառույցների պատասխանատուներ: Ի դեպ, մարզպետը նաև օդանավի առաջին ուղևորն էր: Վայրէջքից հետո հայտարարվեց, որ կանոնավոր թռիչքներ կիրականացվեն համալիրի շինաշխատանքների վերջնական ավարտից հետո: Այս պահին իրականացվում են թռիչքադաշտի նորոգման և ուղևորահամալիրի բարեկարգման աշխատանքներ: Ինչպես փոխանցեցին Սյունիքի մարզպետարանից, նախնական գնահատմամբ, օդանավակայանի համալիրի վերականգնման համար կծախսվի շուրջ 2 մլն դոլար: Ֆինանսավորումն իրականացնում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերությունը և «Սյունիքի զարգացման և ներդրման» հիմնադրամը: Բյուջետային միջոցներից գումար չի ծախսվելու:

«Ներկայումս քաղավիացիայի վարչության գլխավոր մասնագետների հետ մշակվում են թռիչքվայրէջքների սխեմաները, որոնց նպատակն է հնարավորինս նվազեցնել բարդություններն ու ռիսկերը, բացի դրանից, քննարկվում է նաև տարածաշրջանի բնական և արհեստական խոչընդոտների թվային քարտեզի ստեղծման հնարավորությունը, որի առկայության դեպքում օդաչուների համար ավելի դյուրին կլինի օդանավակայան չվերթեր իրականացնելը: Այս փուլում նախատեսվում է շահագործել մինչև 20-25 տեղանոց օդանավեր, մասնավորապես՝ չեխական L-410 օդանավը: Օդանավերի տոմսերի գների մասին այս պահին ոչինչ չենք կարող ասել, քանի որ գնային քաղաքականությունը որոշելու և կատարելու է ավիափոխադրողը»,- տեղեկացրեց Սյունիքի մարզպետի խորհրդական Սահակ Հակոբյանը և ընդգծեց, որ օդանավակայանի գործարկումը ռազմավարական մեծ նշանակություն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ զբոսաշրջության առումով և կարող է լուրջ խթան հանդիսանալ մեր երկրում փոքր ավիացիայով ներքին օդային փոխադրումների կայացման համար: Հաշվի առնելով, որ Կապանը գտնվում է սահմանամերձ և սեյսմավտանգ գոտում (չմոռանանք 1968-ի Քաջարանի ուժեղ երկրաշարժի մասին), մշտապես կարևորվել է Կապանի օդանավակայանի դերը քաղաքաշտպանության՝ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, հնարավոր հետևանքների կանխման, մարդկային կամ նյութական կորուստները նվազեցնելու առումով: *«Բնականաբար, սահմանամերձ գոտու և Երևանի միջև օդային կապը ռազմավարական լուրջ և տարատեսակ խնդիրների լուծման համար դրական ազդեցություն կունենա, այդ թվում նաև ըստ անհրաժեշտության ավիացիայի գործարկման առումով (սանիտարական, գյուղատնտեսական, հրդեհաշիջման, բժշկական և այլ թռիչքներ)»,-* հավելեց մարզպետի խորհրդականը: Նշենք, որ դեռևս 2013-ին օդանավակայանի վերագործարկման ուղղությամբ ուսումնասիրություններ էին իրականացվել, համապատասխան չափագրումներ արվել, կազմվել նախնական հաշվարկներ ուղևորների սպասարկման, թռիչքի իրականացման ծախսերի վերաբերյալ և այլն: Ըստ այդ հաշվարկների՝ այն ժամանակ ընտրված օդանավի ուղետոմսի արժեքը մոտ 55-56 հազար դրամ էր, այն մատչելի դարձնելու համար նախատեսվում էր սուբսիդավորման միջոցով արժեքը դարձնել մոտ 15 հազար դրամ:

Քաղավիացիայի գլխավոր վարչության օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության պետ Գալուստ Պողոսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ իրենց մասնագետների կողմից նոր ուսումնասիրություն արվել է նաև 2017-ի մարտ ամսին: *«Կարծում ենք, սակագնի նվազում կլինի՝ կախված ընտրվելիք ավելի նոր, հագեցած օդանավի սպասարկման, վառելքի և պահպանման ծախսի հետ: Հակված ենք ընտրությունը տալ փոքր չափերի օդանավերին, չենք շահագործելու, օրինակ՝ «Բոինգ» տեսակի օդանավ, որովհետև նման ուղևորափոխադրումներ չենք կարող ապահովել, շահագործելը ձեռնտու չէ, բացի դրանից, գործող վազքուղիները դրանց համար նպատակահարմար չեն»,-* տեղեկացրեց վարչության պետը՝ մեկ անգամ ևս նշելով, որ ներկայիս բոլոր հաշվարկները դեռ նախնական են, գործընթացը խոր ուսումնասիրության կարիք ունի, վերջնական պատկեր կլինի օդանավի ընտրությունից հետո միայն: Այժմ տարբեր երկրներում արտադրված օդանավերի ուսումնասիրություն է կատարվում՝ գնահատելու օդանավի պահպանման, շահագործման ծախսերը, ինչպես նաև հնարավորությունները Կապանի և Հայաստանի այլ օդանավակայաններ թռիչքներ իրականացնելու ուղղությամբ: Պատասխանատուների խոսքով՝ դեռևս որոշված չէ, թե ինչ հաճախականությամբ են թռիչքներ իրականացվելու, պարզ չէ նաև գիշերային թռիչքներ կլինեն, թե՝ ոչ, որն իր հերթին լրացուցիչ ծախսեր կպահանջի՝ լուսազդանշանային համակարգի օգտագործման և այլ միջոցների կիրառման պատճառով:

Իսկ հարցին, թե Կապանինը համարվում է բարդ օդանավակայան, հնարավո՞ր է, որ այդ հանգամանքը խոչընդոտ հանդիսանա վերագործարկման համար, Գալուստ Պողոսյանը պատասխանեց, որ Հայաստանի գրեթե բոլոր օդանավակայաններն էլ համարվում են բարդ, բայց դա խոչընդոտ չէ: *«Այժմ միակ բարդությունն այն է, որ օդանավակայանը գտնվում է սահմանին մոտ, բայց ժամանակակից նավիգացիոն համակարգերի օգտագործմամբ հնարավոր կլինի ավելի ճշգրիտ սխեմաներ կազմել և շրջանցել սահմանին մոտ լինելու հանգամանքը: Համաձայն կառավարության ծրագրի՝ մենք նախատեսում ենք 2018-ին ունենալ նախադրյալներ փոքր ավիացիայի զարգացման համար»,-* ասաց Գալուստ Պողոսյանը և նշեց, որ Կապանի օդանավակայանի վերագործարկման համար, նախնական տվյալներով, վազքուղու մասնակի վերանորոգման դեպքում անհրաժեշտ կլինի մոտ 500 մլն դրամ, իսկ ամբողջական նորոգման համար՝ 700 մլն:

Պատասխանատուների խոսքով՝ հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկվում են, որպեսզի 2018-ին օդանավակայանը պատրաստ լինի շահագործման՝ սահմանված չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Կապան-Երևան

Կենսաբանական անվտանգություն

Եվրամիության «Քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (ՔԿՃՄ/CBRN) գերազանցությունների կենտրոնի» հովանավորությամբ 9 երկրում (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Սերբիա, Մակեդոնիա, Բոսնիա-Հերցոգովինա, Խորվաթիա) իրականացվում է քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման խմբեր ստեղծելու ծրագիր: Նշված երկրներում ստեղծվում են քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման խմբեր, որոնք աշխատելու են սահմանային անցակետերում: Ամեն երկրից վերապատրաստվում է մասնագետների մի խումբ, որն իր երկրում զբաղվելու է տեղացիների վերապատրաստմամբ:

Երկրները նաև գույք են ստանում: Հայաստանից վերապատրաստվել է 9 մասնագետ, որից 6-ը՝ արտակարգ իրավիճակների նախարարությունից: Մենք 230 հազար եվրոյի գույք ենք ստանալու. անհատական պաշտպանության միջոցներ, քիմիական, կենսաբանական, ճառագայթային ազդակների հայտնաբերման սարքեր և այլն:

Հայաստանում քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման խմբերը պետք է աշխատեն Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերի սահմանային անցակետերում: Հունիսի 26-30-ը վերապատրաստման դասընթաց էր կազմակերպվել Լոռու մարզում: Ինչպես ասվեց, խմբերում ընդգրկված մասնագետների համար վերապատրաստման դասընթացը վարում էին Եվրոպական Միության «Քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (ՔԿՃՄ/CBRN) գերազանցությունների կենտրոնի» ծրագրով անցած մասնագետները: Դասընթացը երկու փուլով է՝ տեսական և գործնական: Քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման խմբերի անդամները նախ ծանոթանում են գույքին և դրա օգտագործման ձևերին, ապա աշխատում այդ գույքով: Օգոստոսին դասընթաց կկազմակերպվի Շիրակի, իսկ հոկտեմբերին՝ Սյունիքի մարզերի քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման խմբերի համար:

ԵՄ ծրագրով նախատեսված են ազգային շտաբային և դաշտային վարժանքներ: Հայաստանն արդեն անցկացրել է նման վարժանքներ: Նաև համատեղ (Հայաստան-Վրաստան, Ուկրաինա-Մոլդովա և այլն) դաշտային վարժանքներ են նախատեսված՝ քիմիական, կենսաբանական, ճառագայթային ռիսկերը պետական սահման չեն ճանաչում, և նման աղետի ժամանակ հարևան երկրները պիտի օգնեն իրար: Հոկտեմբերին կանցկացվի քիմիական, կենսաբանական, ճառագայթային ռիսկերին արձագանքման հայ-վրացական համատեղ վարժանք, որին կմասնակցեն նաև քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման նոր ձևավորված խմբերը: ■

911 Արտակարգ թերթ
N 25 (673)
30 հունիսի-6 հուլիսի, 2017

«Մոխրե անձրև»

Իսպանական Անդալուզիա համայնքի Մոգեր քաղաքի շրջակայքում բռնկված անտառային հրդեհների պատճառով տարհանվել է ավելի քան 2000 մարդ: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում են հարյուրավոր մարդիկ, ուղղաթիռներ: Քաղաքի վրա «մոխրե անձրև» է տեղում: Հրդեհի պատճառը դեռ անհայտ է: Տուժածների մասին տեղեկություններ չկան:

Դրսևորման գործ
5

ՊԵՏՔ Է ԱՐԺԱՆԱՎՈՐ ԼԻՆԵՍ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՍ ՄԱՐԴ ՓՐԿԵԼ

Հոգեվիճակը կատարած աշխատանքով է գնահատվում

«Փրկարար լինելը հոգեվիճակ է, ոչ թե աշխատանք»,- այս համոզմունքն ունի Արարատի մարզային փրկարարական վարչության Մասիսի հրշեջ-փրկարարական ջոկատի (ՀՓՋ) հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Արտյոմ Ստեփանյանը: Սակայն համոզմունք դարձած հոգեվիճակը հենց կատարած աշխատանքով է գնահատվել որպես շոշափելի իրողություն. փ/ծ մայորը 2016-ին արժանացել է «Լավագույն հրշեջ-փրկարար» կոչման, իսկ մինչ այդ՝ 2015-ի սեպտեմբերի 4-ին, որ մեր հանրապետությունում նշվում է որպես «Փրկարարի օր», պարգևատրվել է ԱԻ նախարարության պատվոգրով: Մասնակցել է ՆԱՏՕ-ի զորավարժանքներին, իսկ մինչ այդ Ֆրանսիայի Մարսել քաղաքում վերապատրաստման դասընթացներ է անցել՝ ստանալով առաջին բուժօգնության հրահանգչի արտոնագիր:

Հրամանատարի տեղակալը փրկարարի ուղին սկսել է Երևանի թիվ 5՝ Արաբկիրի ջոկատից 2000 թվականին, նախ՝ որպես շարքային հրշեջ, հետո՝ ավագ, օղակի հրամանատար: 2005-ին ստանալով սպայական կոչում՝ նշանակվել է հերթափոխի պետ: Իսկ 2016-ի մայիսի 3-ին տեղափոխվել է Մասիսի ՀՓՋ, արդեն որպես հրամանատարի տեղակալ: Շուրջ 17 տարի մարտական ուղի անցած սպան վստահ նշում է, որ փրկարարի աշխատանքում շատ կարևոր է զսպված ու մեծահոգի մարդ լինելը. *«Նախ պետք է մարդ լինես, որպեսզի կարողանաս մարդ փրկել: Հոգով, էությամբ պետք է փրկարար լինես, հակառակ դեպքում այս համակարգում անելիք չունես»:*

Առաջին հրդեհաշիջումը 2001-ին էր, որին մասնակցել է դեռևս շարքային հրշեջ Ստեփանյանը, եղել է Զեյթունի ուսանողական հանրակացարանում. *«Երրորդ՝ բարձր կանչի հրդեհ էր, հնդիկ ուսանողների մասնաշենքն էր այրվում: Ե՛վ հրդեհն ենք մարել, և՛ մարդկանց կյանքեր փրկել»:* Նշում է, որ հրդեհը հրդեհ է, բայց քաղաքային և գյուղական համայնքների հրդեհների միջև տարբերություն կա, որ Արաբկիրում աշխատած տարիներին համեմատաբար ելքերը շատ էին, հատկապես կենցաղային կանչերը, իսկ Մասիսում հրդեհները սեզոնային են. *«Հիմնականում խոտածածկ տարածքներ ու հնձած արտեր են բռնկվում՝ հաճախ հենց մարդկանց միջամտությամբ, երբ գյուղացին հնձից հետո հարդն է կրակի տալիս՝ արտը մաքրելու նպատակով, ինչն էլ անզգուշության հետևանքով տարածվում է՝ սպառնալով հարևան արտերին ու այգիներին: Հիմա ամառ է, և սկսվում է մեր թեժ ծառայության շրջանը: Թեժ՝ և՛ կանչերի հաճախակիության, և՛ հենց իրականացված աշխատանքի առումով»:* Իսկ Մասիսում արդեն մեկ տարվա ընթացքում շուրջ 110 հրդեհաշիջման աշխատանքների է մասնակցել, 20-ի էլ հասնող ճանապարհատրանսպորտային պատահարների: Եթե ջոկատի տղաներն իրար փոխարինելով՝ հերթափոխի օրերին են ծառայություն իրականացնում, ապա հրամանատարն ու տեղակալը նույնն անում են ամեն աղետի ու պատահարի դեպքում:

Աշխատանքային ժամերի սկիզբն ու ավարտը հարաբերական սահմանում է, նկատում է փ/ծ մայոր Ստեփանյանը, իրականում ծառայությունը շուրջօրյա է, աշխատանքից դուրս ժամերին անընդհատ ականջը սպասում է կանչի. *«Աշխատանքից դուրս՝ փշերի վրա ենք, թե հիմա-հիմա զանգ կգա ջոկատից՝ հրդեհ է: Նման դեպքերում՝ համագործակցելով հրամանատարի հետ, կամ ես, կամ ինքն է մեկնում հրդեհի վայր»:* Հատկապես բարդ հրդեհների ու ծանր իրավիճակների ժամանակ տղաների կողքին է կանգնած, եթե վտանգ կա, որ կարող են վնասվել, առաջինն ինքն է նետվում գործողության մեջ, քանի որ իր փորձն ավելի շատ է: *«Ցանկացած իրավիճակում միասին ենք»,*- ասում է Արտյոմ Ստեփանյանը:

Հրշեջ-փրկարարը, հատկապես ջոկատի հրամատարն ու տեղակալն իրավունք չունեն հիվանդանալու, մեկ-երկու օրով հեռու տեղ գնալու, հատկապես՝ հանրապետությունից բացակայելու թեկուզ հանգստյան օրերին: Միշտ պետք է սթափ վիճակում լինեն անգամ քեֆի ու հարսանիքի սեղանին, քանի որ ամեն վայրկյան հրդեհի կամ ճանապարհատրանսպորտային պատահարների վայր մեկնելու հավանականությունը կա: Որևէ ժամանցի կամ հաճելի առիթով լիարժեք զգացողությունը միշտ վերապահումով է տրվում, քանի որ նրանց լիարժեքությունն ամբողջանում է միայն ծառայության մեջ, որի սկիզբն ու վերջը հարաբերական է, ամեն վայրկյան հավանականությունն է ռեալ: Հենց մեր զրույցի ժամանակ էր, նոր էինք խոսքը սկսել, երբ ահազանգ հնչեց, թե շրջանի համայնքներից մեկում հրդեհ է բռնկվել: Հրամանատարի տեղակալը նոր էր սուրճ դրել և չէր էլ հասցրել կում անել, այդպես էլ թողեց սեղանին ու հերթափոխի հետ մեկնեց դեպքի վայր: Մինչև վերադարձավ, արդեն սուրճը սառել էր: *«Երբ ահազանգ ենք ստանում, ամեն ինչ մոռանում ենք: Ես ինձ չեմ պատկերացնում թոշակի անցած հրշեջ-փրկարար, քանի ուժ կա՝ աշխատելու եմ: Ես ինձ հանգիստ եմ զգում, որ գոնե մեկ մարդու կյանք եմ փրկել, օգնել եմ մարդկանց, հենց այնպես աշխարհ չեմ եկել»,*- ասում է հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Արտյոմ Ստեփանյանը:

Իսկ Մասիսի ՀՓՋ հրամանատար, փ/ծ մայոր Բագրատ Դանիելյանը գործընկերոջը բնորոշում է որպես երկարամյա ճանապարհ անցած փորձառու սպայի, որի ներկայությունը ջոկատում և վստահություն է, և աշխատանքի լիարժեք կազմակերպում. *«Արտյոմ Ստեփանյանի հետ ընդամենը մեկ տարի ենք աշխատում, բայց այդ ժամանակն էլ բավական է, որպեսզի ճանաչենք և վստահենք նրան և՛ որպես մարդու, և՛ որպես սպայի: Մեր ջոկատը մի ընտանիք է, որտեղ մեծ դերակատարություն ունի հրամանատարի տեղակալ Ստեփանյանը»:* ■

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ուսումնավարժանք

Օրերս ՀՀ ԱԻՆ Շիրակի մարզային փրկարարական վարչությունը հրամանատարաշտաբային ուսումնավարժություն է անցկացրել «Կառնուտի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում» թեմայով:

Կառնուտի ջրամբարը գտնվում է Գյումրիից մոտ 8 կմ հեռավորության վրա՝ Կառնուտ գյուղի մոտ: Ջրամբարը սնվում է սեփական ավազանի Կառնուտի սելավատարից, Ախուրյան և Ջաջուռ գետերից՝ Շիրակի ջրանցքից: Ընդհանուր 23,9 մլն խմ տարողությամբ ջրամբարը կառուցվել է ոռոգման նպատակով և շահագործման է հանձնվել 1970-ականների սկզբին: Ջրամբարի ջրերով են ոռոգվում Ախուրյանի, Արթիկի և Անիի տարածաշրջանների գյուղերը՝ մոտ 7000 հա հողատարածություն:

Ըստ վարժանքի սցենարի՝ առատ տեղումների հետևանքով՝ ջրամբարում ջրի ծավալը հասել էր կրիտիկականի, առկա էր պատվարի փլուզում, ինչպես նաև սելավատարի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրի տակ հայտնվելու վտանգի առջև էին կանգնած շրջակա համայնքները:

Գյումրու և Ախուրյանի հրշեջ-փրկարարական ջոկատներից բացի, վարժանքին մասնակցում էին նաև Շիրակի մարզպետարանի աշխատակիցները, ոստիկանական ուժերը, Ախուրյան, Արևիկ, Գետք, Ղարիբջանյան, Ազատան համայնքների ներկայացուցիչները, ԱԻՆ-ի հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության «Ախուրյան» գետավազանի հիդրոլոգիական կայանի աշխատակիցները, «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության հյուսիսային տարածքային կենտրոնի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության Շիրակի գազիֆիկացման գազամատակարարման մասնաճյուղի և այլ շահագրգիռ կազմակերպությունների անդամներ: Հրամանատարաշտաբային վարժանքն անցկացվել է 3 փուլով, որից երկուսը տեսական բնույթ էր կրում, իսկ մյուսը՝ գործնական: Առաջին փուլի ժամանակ՝ ստեղծված արտակարգ իրավիճակից ելնելով՝ շտապ խորհրդակցություն է հրավիրվում Շիրակի մարզպետարանում, մարզային փրկարարական վարչությունը հեռուստատեսությամբ և ռադիոյով կազմակերպում է հավանական ջրածածկման գոտում հայտնվող բնակչության վարվելակերպի կանոնների իրազեկում, մարզային ԱԻ հանձնաժողովի կողմից ճշգրտվում են տարհանվողների տեղաբաշխման և կենսաապահովման հաշվարկները: Գործողության մեջ է դրվում «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում մարզի բնակչության պաշտպանության պլանը», կազմակերպվում ջրածածկման գոտու բնակչության տարհանման, գյուղատնտեսական կենդանիների տեղափոխման, նյութական արժեքների դուրս բերման միջոցառումները:

Իսկ երկրորդ փուլի ժամանակ քննարկվում էր որոնողափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների և տուժած բնակչության կենսաապահովման միջոցառումների կազմակերպման վերաբերյալ հարցեր: Սցենարի համաձայն՝ ջրհեղեղի հետևանքով Կառնուտի ջրամբարի պատվարը փլուզվել է, ջրածածկ են եղել Ախուրյան, Արևիկ, Ազատան, Ղարիբջանյան և Գետք համայնքները, վնասվել են էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման համակարգերը, ջրով ողողվել բնակելի տներ, գյուղամիջյան կամուրջներ, ճանապարհներ և ցանքատարածքներ և այլ ինժեներական կառույցներ, բռնկվել է հրդեհ:

Երրորդ փուլով՝ ուսումնավարժության ժամանակ՝ Ախուրյան և Արևիկ համայնքներում իրականացված գործնական միջոցառումների ժամանակ հրշեջ-փրկարարները ռիսկային գոտում գտնվող Ախուրյան համայնքի մանկապարտեզից տարհանել են երեխաներին, ապա դուրս բերել աշխատակազմը, նրանց տրանսպորտային միջոցներով բարեհաջող տեղափոխել անվտանգ տարածք: Հրշեջ-փրկարարները կատարել են հրդեհաշիջման աշխատանքներ, այնուհետև փլատակների տակից հանել տուժած բնակչին, ինչպես նաև մեքենայից դուրս բերել արգելափակված քաղաքացուն… Արևիկ համայնքում տարհանվել են բնակիչներ, ջրատարի մաքրման, բետոնե կոնստրուկցիաների դուրս բերման և այլ անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվել:

Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Արթուր Կարապետյանը բավարար է գնահատել վարժանքի արդյունքները. *«Այն կարևոր նշանակություն ուներ մարզի համար, ճիշտ է, Կառնուտում փլուզման վտանգ չկա, բայց Աստված մի արասցե, վտանգի դեպքում այս փորձը կօգնի, որ մեր բնակիչները պատրաստ լինեն և տեղեկացված տարհանման գործընթացից, իսկ շահագրգիռ բոլոր կառույցների աշխատակիցներն ավելի օպերատիվ և արդյունավետ կգործեն»:* ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

911 Արտակարգ թերթ
N 25 (673)
30 հունիսի-6 հուլիսի, 2017

Արտակարգ ժամանակներ

Ասել է թե՝ հենց մեր քաղաքակրթությունը, որը է՛ն գլխից սպառումի քաղաքակրթություն է եղել... Եթե մեր ենթադրությունը հանկարծ ու ճիշտ է, ապա ապրելը սպառել էր նշանակելու, և մարդը մի օր սպառելու էր իր միջավայրը, իր զգացումներն ու պատկերացումները, իր նմաններին ու իրեն: ...Փառք Աստծո, այս ամբողջ շարադրանքը ենթադրություն է միայն, որի նպատակը հենց ենթադրության գծած վտանգավոր պատկերներից խույս տալն է՝ իրականության մեջ:

Շարակ 6

Ավագ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՆԽՏՐԱԿԱՆ

Եթե Լեզուների Խառնակման պատմությունը (Բաբելոնի աշտարակաշինություն) փորձենք իբրև փոխաբերություն ընկալել (թեպետ, կարծես թե, մեկ անգամ արդեն փոխաբերվել է այնպես, որ այլևս դժվարությամբ է տեսնվում բուն փաստը), ապա կարելի կլինի բոլոր ժամանակներում, այսինքն՝ միշտ, դիտարկել ՆՄԱՆ ՄԻ ԲԱՆ: Չէ՞ որ միմյանց չհասկանալը այս կամ այն չափով նույն Խառնակությունն է: Ասել է թե՝ հենց մեր քաղաքակրթությունը, որը է՛ն գլխից սպառումի քաղաքակրթություն է եղել... Եթե մեր ենթադրությունը հանկարծ ու ճիշտ է, ապա ապրելը սպառել էր նշանակելու, և մարդը մի օր սպառելու էր իր միջավայրը, իր զգացումներն ու պատկերացումները, իր նմաններին ու իրեն: Այնպես էր սպառելու, որ վերականգնելու ոչ մի հույս չէր տեսնելու, թեպետ ի՞նչ հույսի մասին էր լինելու խոսքը, երբ վերականգնումի խնդիր դրված չէր լինելու առհասարակ, և սպառման հսկա մեխանիզմը վայրկյան անգամ չէր կարողանալու կանգնել...

Ենթադրենք, թե մարդուց ինչ-որ բան է սպասվում. ի՞նչ...

Սպասողնե՛րը կիմանան: Մյուս կողմից էլ՝ հանգիստ չէր տալու մութ մի հարց՝ իսկ ի՞նչ է սպասում հայրն իր զավակից:

Ենթադրենք, թե ամենամեծ կորուստը մահն է, ամենաչանվանված նվաճումը՝ անմահությունը: Ենթադրենք, թե այդպես էլ կա. նույն «արատավոր» կամ, եթե կուզեք՝ «անարատ», շրջանն է...

Անմահին ի՞նչ երազանք, ի՛նչ կորուստներ, ի՛նչ սխալականություն... Անմահն իր սխալականությունն ինչպե՞ս պիտի զգա, ենթադրենք, թե մահն է, որ ցուցանում է սխալականությունը, մահն է նաև, ուրեմն, այն միակ ուժը, որ ունակ է ճշմարտությունը ցուցանելու... Մի՞թե այստեղ է թաքնված Սրբազան Գաղտնիքը՝ Մահկանացուների «Օգնությամբ՝ Փորձով» Տեսնել Ամբողջ Ճշմարտությունը... Նման է. նման է հոր ու զավակի հարաբերության, բայց չափումներն են տիեզերական, երկրային չեն:

...Ենթադրենք, թե մարդը «չհասկացավ» սա, ենթադրենք, թե չէր էլ կարող, Հուշը չէր թողնելու... Մի դուռ չէր բացվել, անմահության դռնից մարդն այդպես էլ չմտավ: Հիշում էր: Դա միակ բանն է, որ մարդը հիշում է, ու սկսվե՛ց...

- Այլ ճշմարտություն, հավերժություն-անմահությունից բացի, գոյություն չունի,- ասաց մարդը: Երբե՛ք ու Ոչ Մի Տեղ գոյություն չի ունեցել: Ասաց ու սկսեց փնտրել ամենուր՝ առանց խտրության, ամեն կերպ՝ առանց խտրության:

Ենթադրենք, թե մարդու ոչ տեղն էր անսահմանափակ, ոչ հնարավորությունը. ամեն ինչ եկավ ու հանգեց Պատերազմին, մարդու պատմությունը, դեռ չսկսված, վերածվեց մարդու Պատերազմների Պատմության: Ոչինչ, որ մեզ այլ բան են սովորեցրել, իրականում տեղի ունեցածի էությունն այլևս մի մեծ գաղտնիք էլ չէ. հազարամյակներ շարունակ մարդիկ միմյանց ոտնատակ են տվել հանուն միմիայն մեկ բանի՝ անմահության...

Մի ձեռք, մի զորեղ ձեռք շրջել է դրա մասին պատմող բոլոր էջերը, գրքի մեջ մտցրել ուրիշ էջեր՝ դրանով ստիպելով, որ հիշողությունն այլ բան հիշի:

Այդ ուրիշ բանի հետևից ինքնամոռաց ընթանալով՝ գողը գողացել է, շնացողը՝ շնացել, սուրբը սրբացել (Նոր Կտակարանն է ասում)՝ հստակ չգիտակցելով էլ, որ ամեն ինչ արվում է հանուն կորուսյալ անմահության... Սա առավել քան ենթադրություն է...

Փառք Աստծո, այս ամբողջ շարադրանքը ենթադրություն է միայն, որի նպատակը հենց ենթադրության գծած վտանգավոր պատկերներից խույս տալն է՝ իրականության մեջ: ■

ՓՈՐՁ

Եթե խառնակվեցին լեզուները (տես՝ Հին Կտակարանը), ապա խառնակվեց նաև հիշողությունը. մարդն իր «անմահությունը» լիովին մոռացած, սկսեց այդ «ինչ-որ բանը» որոնել ամեն ինչում. մեկը՝ փողի, մյուսն՝ ուրիշի ունեցվածքի, երրորդը՝ սիրո մեջ ու այդպես շարունակ... Իհարկե, չէր գտնելու, և, իհարկե, երկարելու էր շղթան մինչև անիմաստություն, մինչև անմտություն, մինչև անհեթեթություն, մինչև այն հեռավոր ժամանակները, երբ կսպառվեն մարդուն հասանելի տարածությունն ու ժամանակը, և մարդն ակամա կկանգնի այնպիսի մի դուռ բացելու անհրաժեշտության առջև՝ ինքն իր միակ իրական տենչի հետ ձեռք ձեռքի տված, դասական ողբերգությունների ոգով՝ վեհ ու միայնակ...

Հստակ չիմանալով նույնիսկ, թե ինչ կա այդ անծանոթ դռների հետևում... ■

Ա. Ե.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) բնակչության պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 21-3.1-56)

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծերի մշակման և սահմանված կարգով ներկայացման հաստատման աշխատանքներին, մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլանների և ծրագրերի մշակման աշխատանքներին: Իրականացնում է մարզի տարածքում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքման և վերլուծության աշխատանքները, մասնակցում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցման աշխատանքներին՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 03.08.2017 թ., ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

• բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

• նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2) ենթակետում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝

• գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),

• աշխատանքային գրքույկի պատճենը,

• արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանքը,

• մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափի,

• անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 14.07.2017 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Նախարարության աշխատակազմ **(ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 010 31-78-30):**

911 Արտակարգ թերթ
N 25 (673)
30 հունիսի-6 հուլիսի, 2017

Հաջորդ համարում

Հունիսի 30-ին ՀՀ ԱԻՆ-ում տեղի կունենա ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 2016-2017 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնումը: Նույն օրը Աժ պաշտպանության եւ անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում կլսվի ՀՀ 2016-ի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ԱԻՆ-ի մասը: Տես՝ մեր թերթի հաջորդ համարը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԵՏ

Արտակարգ իրավիճակների բազմազանությունը և բժշկական հետևանքների նշանակալից հնարավոր մասշտաբները թելադրում են դրանց նախազգուշացման և վերացման համար մշտապես պատրաստ պահել արտակարգ իրավիճակների բժշկության (աղետների բժշկության) ազգային համակարգը: Տարածաշրջանում վտանգավոր երկրաբանական, մթնոլորտային երևույթների, ինչպես նաև տեխնածին աղետների հնարավոր դրսևորումները կարող են հանգեցնել աղետային՝ սանիտարահիգիենիկ, էպիդեմիոլոգիական իրավիճակների, որոնք ուղեկցվում են մարդկանց առողջությանը սպառնացող վտանգներով, իսկ դրանց վերացման անհրաժեշտությունը պահանջում է բժշկական օգնության ցուցաբերում՝ որպես պետության պարտականություն քաղաքացիների նկատմամբ: Այդ պատճառով մարդկանց առողջությանը սպառնացող վտանգները, ինչպես նաև արագ և որակյալ բուժօգնություն ցուցաբերելու, սանիտարաէպիդեմիոլոգիական իրավիճակները կառավարելի և նրանց հետևանքները շուտափույթ վերացնելու համար Երևանի պետական բժշկական համալսարանի Ռազմաբժշկական ֆակուլտետի արտակարգ իրավիճակների բժշկության և ռազմական թունաբանության ամբիոնն ուսումնասիրում է արտակարգ իրավիճակների տեխնածին վթարների և անտրոպոգեն կոնֆլիկտների բժշկասոցիալական հետևանքները՝ դրանց նախազգուշացման և վերացման համար անհրաժեշտ սկզբունքներ մշակելու նպատակով: Գիտական հետազոտություններն ընդգրկում են մեր երկրում տեխնածին և անտրոպոգեն աղետների բուժապահովման և ռազմական թունաբանության մի շարք հիմնախնդիրները: Ամբիոնում արտակարգ իրավիճակների բժշկություն առարկան դասավանդվում է 1994-ից: 2008-ին առանձնացվել է որպես ինքնուրույն ցիկլ: Իսկ ամբիոն է դարձել 2013-ից: Առայսօր այն ղեկավարում է բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, բ/ծ փոխգնդապետ Աշխեն Խաչատրյանը: Ամբիոնի գիտական հիմնական ուղղություններն են՝

• հնարավոր աղետների բժշկասանիտարական հետևանքների ուսումնասիրումը և օպերատիվ կանխատեսման մեթոդների հիմնավորումը,

• աղետների բժշկասանիտարական հետևանքների վերացման անհրաժեշտ ուժերի և միջոցների պահանջների հիմնավորումը: Արտակարգ իրավիճակի տարածք ժամանած շտապօգնության և փրկարարների բազայի վրա ստեղծված խմբերի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա աղետի ծավալի որոշում և լրիվ մասշտաբով բուժօգնության կազմակերպում,

• աղետների ժամանակ բժշկասանիտարական ապահովման կազմակերպման օպտիմալ տարբերակի հիմնավորումը: Կարևորագույն գիտական խնդիր է բուժօգնության ցուցաբերման և արտակարգ իրավիճակների, արհավիրքների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բժշկական տարհանման միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպական և ռազմավարական հիմունքների մշակումը, ինչպես նաև ռազմավարական պլանավորումը՝ հիմնված արտակարգ իրավիճակների հնարավոր մասշտաբների ու տեղանքի կանխատեսման և տուժածների խմբերի տարհանման երթուղայնացման և նրանց բուժհաստատություններ հասցնելու խնդիրների լուծման վրա,

• արտակարգ իրավիճակների բժշկագիտության և ռազմական թունաբանության գիտական, կազմակերպչական, մեթոդական հիմքերի և նրանց պատրաստվածության աստիճանի բարձրացման մշակումը, ըստ որի՝ ծառայության ուժերի և միջոցների բավարար ապահովվածությունը բխում է բնակչության սանիտարական կորուստների կանխորոշման վատթարագույն տարբերակների և տարածքի առողջապահության իրական հնարավորությունների գիտահիմնավորված մեծությունից: Բժշկական ուժերի և միջոցների պահանջարկի և արտակարգ բուժօգնության ծավալի չափի որոշման համար ճշգրիտ տեղեկատվության մեթոդիկայի մշակում՝ աղետի մասշտաբների, ախտահարող գործոնի բնույթի, տուժածների կողմնորոշիչ թվի, հաղորդման և տարհանման ճանապարհների հասանելիության վերաբերյալ,

• արտակարգ իրավիճակների բժշկության կառուցվածքային կազմակերպման, վարչարարության մեթոդների և կատարելագործման հիմքերի մշակումը,

• առողջապահական համակարգի աշխատողներին հետբուհական արտակարգ իրավիճակների բժշկության և ռազմական թունաբանության հիմունքների ուսուցման, վերապատրաստման դասընթացների կազմակերպումն ու անցկացումը,

• արտակարգ իրավիճակների բժշկության և ռազմական թունաբանության մեթոդական ձեռնարկների մշակումն ու հրապարակումը,

• արտակարգ իրավիճակների բժշկության և ռազմական թունաբանության փորձի ուսումնասիրումն ու վերլուծությունը:

Աշխեն Խաչատրյանը կարևորում է համագործակցությունը ՀՀ ԱԻՆ-ի «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոնի» հետ՝ հատկապես գիտական, գործնական և մեթոդական ոլորտներում: Ի դեպ, Աշխեն Խաչատրյանը վերջերս է մասնակցել ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետում անցկացվող հատուկ դասընթացին և նշում էր այն բարձր ուսումնամեթոդական մակարդակը, որն առկա էր ուսուցման ողջ ընթացքում:

Ֆակուլտետի պետ, բ/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Գալստյանը հաղորդեց, որ նախատեսվում է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության անձնակազմի ուսուցում ռազմաբժշկական ֆակուլտետում մի քանի ուղղություններով, հատկապես՝ առաջին բուժօգնության և ռազմական թունաբանության:

Փրկարարների հետ պարապմունքներ կանցկացնեն ամբիոնի փորձառու դասախոսները: Կօգտագործվի ֆակուլտետի հարուստ լսարանային և համալսարանի սիմուլյացիոն կենտրոնի ժամանակակից գիտատեխնիկական և գործնական բազան: Կենտրոնի 16 սրահները համալրված են համապատասխան մուլյաժներով, շարժասարքերով և կրթական ծրագրեր պարունակող համակարգիչներով: Գործնական հմտությունների ձեռք բերման համար ներդրված են ոչ միայն համալսարանում ավանդաբար կիրառվող մուլյաժներ, անատոմիական մոդելներ, օրգանների և օրգան-համակարգերի ֆանտոմներ (իրականության 1-2 մակարդակներ), այլև իրականության 3-4-րդ մակարդակների տուփային և տեսավարժասարքեր, վիրտուալ և հիբրիդային սիմուլյատորներ, ինտերակտիվ էլեկտրոնային ձեռնարկներ և այլն: Ընդ որում՝ 3-րդ մակարդակի ֆանտոմներն ու մանեկենները համալրված են ինքնագնահատող համակարգով (էլեկտրոնային մանեկեն), իսկ 4-րդը՝ նաև ավտոմատացված ստանդարտ ռեակցիաների հնարավորությունով՝ տեսասարքավորումների կիրառմամբ (համակարգչային մանեկեն): Կենտրոնում կիրառվելու են փրկարարների առաջին բուժօգնության գործնական հմտությունները ստուգելու քննական նոր մեխանիզմներ: ■

Արայիկ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀՀ ԱԻՆ ճԿՊԱ ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի դասախոս, փ/ծ փոխգնդապետ

Եվս երկու դասընթաց

Այս շաբաթ վերապատրաստման հերթական դասընթացներ էին կազմակերպել ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի մասնագետները: Համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետերի համար՝ ճԿՊԱ-ում, Երևանի մետրոպոլիտենի ղեկավար կազմի համար՝ արտագնա՝ մետրոպոլիտենում: Դասընթացներին մասնակցել է մոտ 50 մարդ:

Ֆակուլտետի դեկան Դավիթ Թադևոսյանն ու դասախոսներ Արայիկ Գասպարյանը, Գրիգոր Հակոբջանյանը, Աննա Հովհաննիսյանը, Թերեզ Դիլբարյանը, Վալերի Խոնդկարյանը բազմաթիվ թեմաներ են ներկայացրել. քաղաքացիական պաշտպանության կազմավորումների տեսակներ, կազմակերպական կառուցվածք և ապահովում, կապի և ազդարարման կազմակերպում, կապի ապահովման կառույցներում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում, խոցման ժամանակակից միջոցներ, խոցման օջախներում փրկարարական և անհետաձգելի-վթարավերականգնողական աշխատանքներ, ճառագայթային պաշտպանություն, տեղանքի ճառագայթային աղտոտվածության պայմաններում փրկարարական և անհետաձգելի-վթարավերականգնողական աշխատանքներ, կենսաբանական պաշտպանություն, տեղանքի կենսաբանական աղտոտվածության պայմաններում փրկարարական և անհետաձգելի-վթարավերականգնողական աշխատանքներ և այլն:

2017 թվականի սկզբից ճԿՊԱ ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետն արդեն ավելի քան 50 դասընթաց է կազմակերպել, որոնցից 15-ը՝ արտագնա (նաև մարզերում):

911 Արտակարգ թերթ
N 25 (673)
30 հունիսի-6 հուլիսի, 2017

Մարդը կար և չկա

Մի սովորեցրեք տգետներին. նրանք ոչ միայն չեն հասկանա ու չեն գնահատի, այլև հաջորդ պահին կսկսեն ձեր սովորեցրածը ձեզ հրամցնել, որովհետև կմտածեն, որ իրենք արդեն ամենագետ են:

Ասուք

Օգնում են փրկարարները

Փրկարարները գտել են կորած քաղաքացուն

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 400 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիաջուր», էլցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է մոտ 60 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պտղատու և դեկորատիվ ծառեր:

Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 130 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաքաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Արաբկիր, Կենտրոն, Էրեբունի, Աջափնյակ, Ավան, Նոր Նորք, Շենգավիթ վարչական շրջանների և Լոռու ու Սյունիքի փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: 6 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվտանգ տարածք: Բարձր ջերմաստիճանով պայմանավորված՝ հաճախակիացել են բուսածածկ տարածքների հրդեհները: Այս շաբաթ նման ամենախոշոր հրդեհը գրանցվել է Սյունիքում՝

Մեղրիի օդանավակայանի մատույցներում: Հրշեջ-փրկարարներից 50 որպե է պահանջվել հրդեհը մարելու համար: Այրվել է մոտ 10 հեկտար բուսածածկույթ: Հրդեհաշիջմանը մասնակցել է ազատ հերթափոխից 7 հրշեջ-փրկարար:

Այլ կանչեր. Դավիթաշենի փրկարարներն ահազանգ են ստացել, թե 4-րդ թաղամասում քաղաքացին բարձրացել է 3-հարկանի շինության տանիք և չի կարողանում իջնել: Հրշեջ-փրկարարները քաղաքացուն իջեցրել են շինության տանիքից:

Արագածոտնի փրկարարները կեսգիշերն անց ահազանգ են ստացել, թե Ոսկեհատ գյուղի մոտակայքում քաղաքացի է կորել: Ահազանգը ստանալուց մոտ մեկ ժամ անց հրշեջ-փրկարարները Ոսկեհատ գյուղի դաշտամիջյան հատվածում հայտնաբերել են 55-ամյա տղամարդուն:

Արմավիրի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Ջանֆիդա գյուղում վիրավոր արագիլ կա: Փրկարարները վիրավոր արագիլին տեղափոխել են Արմավիր քաղաքի կենդանաբանական այգի: ■

Արձակվել է 33 000 կրակոց

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» հակակարկտային կայաններից Լոռու, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի մարզերի մոտ 60 համայնքի տարածքներում ներգործության է ենթարկվել տարբեր կարգի կարկտավտանգավոր 10 ամպ, արձակվել է 33 000 կրակոց:

Իմացի՛ր և օգնի՛ր

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Վարակներ. անմիջական շփում. կատաղություն

Կատաղությունը կենտրոնական նյարդային համակարգը ախտահարող՝ տաքարյուն կենդանիների և մարդու վարակիչ հիվանդություն է և կարող է բերել մահվան: Հարուցիչը հիվանդ կենդանու թքի մեջ է և կարող է փոխանցվել միայն կծած կամ թքոտված վերքերով: Գաղտնի շրջանը՝ 10-90 (միջինը՝ 40) օր:

Կատաղության նշաններն են. լավացող, անգամ արդեն սպիացած վերքի շրջանի կարմրություն, այտուց, ցավ, քոր, ծակծկոցներ, ընդհանուր գրգռված վիճակ, չիմնավորված անհանգստություն, անքնություն, կոկորդի մկանների ջղաձգում, հեղուկ խմելիս, հետագայում նաև միայն ջրի տեսքից կամ ձայնից տեղի է ունենում կոկորդի մկանների կտրուկ կծկում, անգամ թեթև քամուց կոկորդի մկանների կտրուկ կծկում, շնչառության դժվարացում, ընդհուպ՝ շնչառության կանգ, առատ թքազատություն, ագրեսիվության նոպաներ, տեսողական և լսողական պատրանքներ:

Կատաղությունը կանխարգելելու համար. մի մոտեցեք կամ շոյեք անծանոթ, թափառող շներին ու կատուներին, կասկածելի կենդանու կծելու դեպքում վերքը լվացեք հոսող ջրով ու օճառով 5-10 րոպե, վերքը մշակելուց հետո տուժածին շտապ տեղափոխեք հիվանդանոց, որտեղ նա կստանա կատաղության դեմ շիճուկ: Եթե տանը պահում եք որևէ ընտանի կենդանի, ապա նա պետք է ստանա բոլոր կանխարգելիչ պատվաստումները և գրանցված լինի անասնաբուժական ծառայությունում: ■

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
www.cmsa.am

Հասցե. Երևան, Ավան, Աճառյան 1
Հեռ. (060) 69-10-01 (ռեկտոր)
(060) 69-10-03, (060) 69-10-05
(060) 69-10-06, (060) 69-10-13

ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիան իրականացնում է.
1. ***բակալավրի կրթական ծրագիր առկա ու հեռակա ուսուցմամբ,***
2. ***մագիստրոսի կրթական ծրագիր միայն հեռակա ուսուցմամբ,***
3. ***միջին մասնագիտական կրթական ծրագիր:***

Ընդունելությունը.
- **Բակալավրիատում՝**
- *Հայոց լեզու (թելադրություն)*
- **Մագիստրատուրայում՝** ***հարցազրույց:***

Մասնագիտություններ	Վարձը (հազ. դր.) առկա	Վարձը (հազ. դր.) հեռակա
Բակալավրի կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	Անվճար	240
Փրկարարական գործ	Անվճար	240
Ճգնաժամային կառավարում	320	260
Կառավարում	320	260
Քաղաքացիական պաշտպանություն	300	240
Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում	300	240
Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում և սպասարկում	300	240
Հրդեհային անվտանգություն	300	-
Մագիստրոսի կրթական ծրագիր		
Փրկարարական գործ	-	320
Ճգնաժամային կառավարում	-	320
Կիրառական սեյսմոլոգիա	-	320
Միջին մասնագիտական կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	150 90*	-
Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	150 90*	-
Կառավարում արտակարգ իրավիճակներում	150 90*	-

Ծանոթություն.
****Նշված վճարով ուսուցումն իրականացվում է Ստեփանավան քաղաքում:***

Միջին մասնագիտական կրթական ծրագրով գերազանց և լավ գնահատականներով շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների ուսումը շարունակել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրով 2-րդ կուրսում:

ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ

Կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 434-Ն որոշմամբ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային հատկացվել է 60 անվճար տեղ առկա ուսուցմամբ «Հրդեհային պաշտպանություն» և «Փրկարարական գործ» մասնագիտությունների գծով, որից 5-ը տրամադրվել է Արցախի Հանրապետությանը:

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ. ԽԱՂԱԹԱՔՍՏՈՑՆԵՐ

Տավուշում 10 000 երեխա ապրում է կրակոցների տակ: «Պահապան» զարգացման հիմնադրամը նպատակ ունի կառուցել 15 **խաղաթաքստոց-ռմբապաստարան** 15 սահմանապահ համայնքներում: Հունիսի 30-ին, ժամը 20:20-ին, Հանրայինի հեռուստաեթերում անցկացվելու է դրամահավաք-մարաթոն: Այս հանգանակությունն ուղղվելու է Բաղանիսում խաղաթաքստոց կառուցելուն:

911 Արտակարգ թերթ
ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շաբաթաթերթ

Հրատարակիչ՝ **ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ**
Գրանցման վկայական՝
03Ա061283, 24.08.2005

Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ԵՂՅԱՆ
Համարի պատասխանատու՝
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նյութերը չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս հղումը թերթին պարտադիր է:
Տպագրված է ԱՋ «Արման Ասմանգուլյան» տպագրատանը.
Երևան, Հրաչյա Ներսիսյան, 1, 125
Ծավալը՝ 2 պայմ. տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.06.2017:
Տպաքանակ՝ 3417: Պատվեր՝ 25
Հասցե՝ Երևան, Աճառյան 1
էլ փոստ՝ artakarg.tert@gmail.com, info@911tert.am
Կայք՝ www.mes.am, www.911tert.am
Հեռ.՝ 060 611 911
Գինը՝ 140 դրամ:

©
Գլխագիրը՝
Արտակ Բաղդասարյանի

Գլխագրի և վերնագրային տառատեսակները՝
Մկրտիչ Մաթևոսյանի